


ԵՌՌՌՌՍ




Օ Ր Ա Գ Ի Ր Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

Թ Ի Ի 19.

1858

Ա. ՀԱՏՈՐ

ԱՆԻՐԱՌԻԹԵԱՆ ՊԱՏԻՓԸ



Էպէս եւ Կրիստոս երկու նա-
մակները ձեռք ձգելու համար
աղէկ միջոց մը մտածած էր եւ
անով անշուշտ իր վախճանին
կը հասնէր, սակայն իր բա-
ժանակցին նենգութիւնն իր
հնաքը բոլորովին ի գերեւ
հանեց: Իր Դիմն Տիբին հետ
ըրած խօսակցութեան իրիկունն
իրեն կանչել տուաւ անոր տան
մօտ գտնուող Ֆրէն անուամբ գինեւաճառն՝ որուն խա-
նութիւն մուտ գետնատան մը մէջ էր եւ շատ գործաւոր-
ներ հոն կը յաճախէին: Նաեւ Դիմն, ինչպէս վաճա-
ռականն ստուգած էր, ամէն իրիկուն հոս կու գար եւ
մինչեւ կէս գիշերուան մօտ գինի խմելով եւ խօ-
սակցութեամբ կանցընէր: Ֆրէն իրեն եկած հրա-
ւերը մեծ զարմացմամբ լսեց եւ դեռ իր երեկոյեան
հիւրերը գալու չսկսած, փութաց Կրիստոսին գրասե-
նեակն երթալ: Սմալ՝ որ միշտ մեծ մտադրութեամբ
իր զլխաւոր վաճառակցին եկող օտարականները կը
զննէր, զինքը գրասենեկին մէջ դիմաւորեց, եւ հար-
ցուց թէ ինչ կ'ուզէ:

— Տէր Կրիստոս կ'ուզէ ինձի հետ խօսիլ,
պատասխանեց գինեւաճառը:

— Պէտք է որ ես ալ լսեմ ձեր խօսակցու-
թիւնն, ըսաւ Սմալ ինքնիրեն, եւ իր վաճառակցին ա-
ռանձին սենեկին դուռն օտարականին ցուցընելով՝ Հոն
է, ըսաւ քու ուզած անձը. շնորհք ըրէ ներս մտի:

Երբ որ դուռը գոցուեցաւ, նենգաւոր բաժա-
նակիցը փութաց գրասենեկին բակն երթալ, որուն
քովն էր Կրիստոսին սենեակն եւ անոր վրայ երկու
պատուհան ունէր, սակայն զանազան վաճառաց բե-

ռերով այնպէս լեցուած էր որ դրսէն ամենեւին լոյս
ներս չէր մտներ: Սմալ աւ վաճառաց մէջէն զգու-
շութեամբ սողալով՝ մինչեւ պատուհանին մէկուն առ-
ջեւն հասաւ եւ մեծ մտադրութեամբ սկսաւ միտ
դնել սենեկին մէջ եղած խօսակցութեան:

— Կրիստոս քեզի վստահիլ, հարցուց Կրիստոս
Ֆրէնին, անոր ողջոյնն ընդունելէն ետքը. քեզի քանի
մը խօսք պիտ'որ ըսեմ, որոնք կրնան քեզի մեծ շահ
բերել. բայց հարկ է որ միայն մեր երկուքին մէջ մնան:

— Կրնաք ամենայն ինչ համարձակ խօսիլ, պա-
տասխանեց գինեւաճառը. կը յուսամ թէ ինձմէ դո՛հ
կ'ըլլաք:

— Դիմն Տիբ անուամբ մարդ մը կը ծանչնամ:

— Այո, անիկայ իմ բարեկամն է. ամէն իրի-
կուն իմ խանութս կու գայ եւ մինչեւ կէս գիշեր
հոն կ'անցընէ:

— Քեզմէ ծառայութիւն մը կը խնդրեմ, որուն
վարձքն իշխանական առատութեամբ կ'ընդունիս:

— Ամէն ծառայութեան պատրաստ եմ, մա-
նաւանդ երբ որ վարձքն առատ է:

— Դիմնին քով Հնդկաստանէն առ Բեգերս
Լաւրեսս գրուած երկու նամակներ կը գտնուին,
որոնք ինձի շատ կարեւոր են. կ'ուզեմ որ ասոնք իմ
ձեռքս հասնին: Թէպէտ եւ ինքը կ'ուրանայ, բայց ես
հաստատութեամբ գիտեմ որ իր քովն են:

— Պաշտարին բան, Տէր, շատ դժուարին
բան:... Ինչպէս կրնամ զանոնք Տիբին ձեռքէն առնուլ:

— Անիկայ քու գիտնալու բանդ է. ես քեզի
միայն այսչափ կ'ըսեմ թէ 500 սղերլինն ամէն դժուա-
րութիւն կրնայ բառնալ:

— Տէր, այսպիսի դորձք մը միայն բռնական
միջոցով կրնայ գլուխ հանուիլ. բայց անկէ ետքն ինձի
կարելի չէ Անգղիայի մէջ մնալ. օտար երկիր մը 500
սղերլինով հանգիստ ապրիլ կարելի չէ:

Երկայն խօսակցութենէ ետքը վերջապէս Կրիս-
տոս յանձն առաւ 1000 սղերլին վճարել. Բայց ըսաւ
հարկ է որ փութաւ. մինչեւ վաղն առտու նամակ-
ները պէտք են իմ ձեռքս հասնիլ: Առտուան ժամը
4ին քու խանութիդ մօտերը մարդ մը կը խրկեմ, որուն
նամակները կը յանձնես եւ ստակը կ'ընդունիս. եւ
կամ ես անձամբ կու գամ եւ զանոնք կ'առնում:

— Այս ալ, ըսաւ Սմալ, որ խօսակցութեան ամէն մէկ բառը լսած էր. հազար սղերլին քիչ ստակ չէ. բայց եթէ թղթերը Կրիստեմին պստալի կ'արժեն, ես անշուշտ անոնցմով տասը հազար կրնամ շահիլ¹։ Աս խօսքով իր թաքստոցէն զգուշութեամբ դուրս ելաւ։ Քանի մը ընդհատեալ նստել ֆլին՝ զուարթ դէմքով գրասենեկէն ելաւ եւ իր խանութը փութաց։

Կէս գիշերը մտնեցած էր. ֆլինին խանութին մէջ գտնուողներն հետ զհետէ անկէ դուրս կ'ելլէին եւ միայն երկու կամ երեք հոգի՝ որոնց մէկն էր Գիմն Տիք, իրենց ըմպելիքին վերջին գաւաթները կը պարպէին։ Երբ որ ասոնք ալ ոտք ելան, գինեվաճառը Տիքին դառնալով՝ քիչ մը կեցիր, ըսաւ, այսօր կարաս մը շաքարօղի գնեցի քեզի հետ իրարու կենդանութեան մէջմէկ գաւաթ խմենք։ Աս խօսքով ուսայնանկը կեցուց. բայց հաղիւ թէ վերջին յաճախորդը (Ֆլեյթ) դուրս ելաւ եւ երկուքը մինակ մնացին, շաքարօղին բերելու պատրուակաւ խանութին ետեւի կողմը գնաց, հոն պատրաստ կեցած աւաղի պարկն¹ առաւ եւ Գիմնի ետեւի կողմն անցնելով՝ յանկարծ անոր գլխուն զօրաւոր հարուած մը տուաւ։ Խեղճ ուսայնանկն հեծնութեան ձայն մ'արձակեց ու մարած գետին ինկաւ։

Ընտրեալ անոր քովը նստաւ չարասիրտ գինեվաճառն եւ զգետնին ամէն կողմը փնտռելով՝ ներքին բաժնիկին մէկ ծածուկ գրապանին մէջ գտաւ ուղած նամակները, եւ զանոնք զգուշութեամբ իր գրապանին մէջ տեղադրելէն ետքը՝ Տիքին մարմինը նոյն վիճակի մէջ թողուց ու խանութէն դուրս ելլելով՝ դուռը կղպեց եւ սկսաւ փողոցին մէջ վեր վար պտրտիլ։

Այս օր մէկ կողմանէ ֆլինին խանութին մէջ աս բաներս կը կատարուէին, Սմալ իր գլխաւոր վաճառակցին դէմ ուրիշ նենգութիւն մը կը նկատէր։ Թէպէտ եւ ինքն ստակ չունէր, սակայն քանի մը բարերարական ընկերութիւններ իր կեղծեալ բարեպաշտութենէն խաբուելով՝ զինքն իրենց արկղակալ ըրած էին, եւ այսպէս իր քովն աղքատաց եւ հիւանդաց համար որոշուած շատ ստակներ կը գտնուէին։ Սմալ ասոնց մէջէն տասը հատ հարկուր սղերլինոց թղթագրամ առաւ քսակը նետեց եւ ֆլինի խանութին կողմերը պզտիկ պանդոկ մը մտնելով՝ հոն մինչեւ գիշերուան ժամն երեք սպասեց. անկէ ետքը փողոց ելաւ եւ սկսաւ ծանր քալուածքով դէպ ի գինեվաճառին խանութն երթալ։ Ֆլին որ արդէն երկու ժամէ ի վեր փողոցին մէջ կը պտրտէր, մթութեան մէջ իրեն մօտեցող ստուերը նշմարեց եւ ինքն ալ իր ընթացքը նոյն կողմն ուղղեց։

— Իարի լոյս ֆլին, ըսաւ Սմալ, երբ որ իրարու քով հասան։

¹ Ասիկայ երկայն ու նեղ, հաստ չուանի նման պարկ մըն է, մէջն աւաղով լեցուած, որուն հարուածը միայն կը թմրեցընէ, առանց կենաց ֆեաս տալու։ Հնդկացի դոկերն ասկից շատ յաճախ կը գործածեն։

— Իարի լոյս, պատասխանեց գինեվաճառը քիչ մը զարմացմամբ։

— Կերեալ թէ ինձի չէիր սպասեր։

— Կարելի է, կրկնեց ֆլին եւ կ'ուզէր ետ քաշուիլ, որովհետեւ միշտ մատնիչք մատնութենէ կը վախնան։ — Կրնամ համարձակիլ ձեզի հարցընելու թէ ինչ է ձեր աս տեղս գալուն պատճառն, ուր ձեզի նման անձինք շատ քիչ կը տեսնուին։

— Տէր Կրիստեմ ինձմէ ամենեւին դադարիք չունի։

— Այնպէս։

— Այո, ինքը զիս խրկեց որ թղթերն ընդունիմ։ Գիտես որ թղթերը, Գիմն Տիքին նամակները։

— Ի՞նչ նշանով կրնամ ճանչնալ որ ստուգիւ ինքն զձեզ խրկած է, հարցուց դարձեալ գինեվաճառը կասկածելու ձեռով մը։

— Իողորովին ապահով ու գոհ ընող նշանով մը, պատասխանեց խաբեբայ վաճառականը, ձեռքը գրապանը խոթելով. հազար սղերլինը հետս բերած եմ՝ զորոնք նամակներն ինձի յանձնելուդ պէս պիտ'որ ընդունին։ Բայց նախ ըսէ ինձի նամակները քովդ են։

Ֆլին ուրախութենէն սկսաւ խայտալ։ Հազար սղերլինն, որ քանի մը ընդհատ իր սեպհական ստացուածը պիտ'որ ըլլար, իրեն առասպելական գումար մը կ'երեւար։

— Ամէն բան ի կարգի է, ըսաւ ցած ձայնով։ Հոս եկէք, հոս։

Աս ըսելով մեծ շէնքի մը դրան կամարը ցուցուց, որուն քով կանխիկ դեռ կը վառէր։ Երբ որ Սմալ կամարին տակը մտաւ, ֆլին անոր առջեւը կենալով՝ ըսաւ իրեն. Նախ հազար սղերլինն։

— Այ, նախ թղթերը պատասխանեց վաճառականը, նախ պէտք եմ քննել թէ արդեօք նոյն թղթերն են։ Երկու կողմն ալ երկայն ժամանակ չուղեցին իրարու զննելիլ. վերջապէս գինեվաճառը պղզտիկ դանակ մը հանեց եւ Սմալին առջեւը դրաւ։

— Տէր Աստուած, գոչեց զարհուրած վաճառականը։ Ա՜ղբես զիս մեղքընե՛կ։

— Ձեզմէ կախալ է, կրկնեց անտարբերութեամբ մը գինեվաճառը նամակներն անոր տալով։ Եթէ ստակն ամբողջ իմ ձեռքս չտուած թեթեւ շարժում մ'ընէք կամ ձայն մը հանէք, նոյն վայրկեանն ստուգիւ կ'որսուած էք, թէպէտ եւ ես ալ կախաղան հանուիմ։

Սմալ զարհուրանքէն բոլորովին գունատած էր ու ջերմէ բռնուածի պէս բոլոր մարմնով կը դողար եւ ակումները կը կափկափէր։ Հաղիւ իր դողողուն ձեռքը կարող եղաւ նամակները բանալ եւ քննել։

— Վա՛ւ ուղած թղթերդ են, հարցուց իրեն գինեվաճառն։

— Այո, պատասխանեց Սմալ թոթովելով. ահա ստակները։ Ֆլին փութով թղթագրամները քննեց եւ ուրախութեամբ գրապանը զննելով Գիշեր բարի տէր, ըսաւ, չեմ կարծեր որ բազմաք մեր տեսութիւնն

աւելի՛ երկնցընել: Իրօք ալ իրենց հոն աւելի ուշա-
նալը Սմալին համար շատ վտանգաւոր էր, կրնար ա-
մէն լոպէ իր վաճառակիցն հոն գալ եւ իր նենդու-
թիւնն երեւան ելել: Հազիւ թէ երկու խօսողներն
իրարմէ բաժնուեցան եւ Սմալ փողոցին ծայրը հա-
սաւ դիմացէն մթութեան մէջ մարդու մը սառեւ
սկսաւ երեւալ. նենգաւոր բաժանակիցն անոր շար-
ժումէն իմացաւ թէ եկողը Արիտիւմ է. եւ որպէս զի
անիկայ զենքը չտեսնէ, մօտաւոր պանդոկ մը մտաւ,
փողոցը նայող սենեակ մը բանալ տուաւ եւ սկսաւ
պատուհանէն միտ դնել: Արիտիւմ փողոցին մէջ ան-
համբերութեամբ վեր վար կը պտըտէր եւ ամէն դի-
մացն եկող մարդիկը մտադրութեամբ կը քննէր:

Եւսմի առտուան վեցին մօտ էր, երբ որ ճիւ-
պերդ Ֆիլինը տեսնելու եւ անկէ նամակներն ընդու-
նելու յոյսը կտրեց, եւ ծանր քալուածքով դէպ ի
իր գրասենեակն սկսաւ երթալ: Բարկութիւնն ու
վախն իր սիրտը կը կրծէին. Արիտիւմ իրեն տուած
պայմանաժամը լեցուած էր ու թղթերը դեռ իր ձեռ-
քը չէին: Նոյն լոպէն սկսաւ զգալ թէ այնչափ տա-
րուան անիրաւութիւններէն եւ եղեռնագործութիւն-
ներէն ետքը, վերջապէս իբրեւ պայծառ երկինքէն ին-
կած շանթ մը հասած էր իր գլուխն անոնց պատիժն:
Իմացաւ թէ կայ նախախնամութիւն մ'որ նաեւ աս
աշխարհքիս մէջ կանուխ կամ ուշ չարագործաց ըրած
անիրաւութիւնը կը պատժէ: Այսպիսի խորհրդով
տանջուելով՝ բայց առանց իր եղեռնագործութեանց
վրայ զղջալու, գնաց մտաւ իր առանձին սենեակը:

Նոյն առտուն Ֆիլին իր խանութն եւ ամէն ստա-
ցուածը թող տալով՝ շոգեկառք մտաւ եւ Լիվերուլ
գնաց ուր Ամերիկայ գացող նաւու մը մէջ ապաւի-
նեցաւ: Իրիկուան դէմ նաւն արդէն բաց ծովն ելած
էր: Շատ զարմացան իր դրացիներն երբ որ բոլոր
օրն իր խանութը գոց տեսան. բայց աւելի սաստիկ
եղաւ իրենց զարմանքն երբ որ նաեւ երկրորդ օրը
խանութը գոց մնաց. իրիկուան դէմ հետաքրքիրներու
բազմութիւն մ'անոր առջեւ ժողովուեցաւ. նոյն ժամա-
նակն հոն եկաւ նաեւ Գիմն Տիքին կիմն որ երկու
օրէ վեր մեծ անձկութեամբ իր սյրը կը փնտռէր, եւ
սկսաւ հոն ժողովուողներուն անոր վրայ տեղեկութիւն
հարցընել: Ֆիլինն այսպէս յանկարծակի աներեւոյթ
ըլլալն եւ Գիմնին կորսուիլը՝ դրացիներէն ոմանց
միտքը կասկած մը ձգեց, ուստի հարկ համարեցան
բանն ոստիկանութեան ծանուցանել: Անմիջապէս ոս-
տիկանութեան գլխաւորին կողմանէ քանի մը դոր-
ծակալներ խրկուեցան որոնք եկան բազմութեան մեծ
մասը ցրուեցին, խանութը բացին եւ մեծ զսլորացմամբ
տեսան անոր մէջ խեղճ Տիքին անկենդան մարմինը:
Արնայ մտածուիլ թէ ինչ աստիճանի սաստիկ եղաւ
ոստայնանկին կնոջը ցաւն ու յուսահատութիւնն երբ
որ իր սյրն այսպէս անշնչացած տեսաւ: Ամէն հոն
գտնուողներն աս եղեռնագործութեան պատճառ ը-
լողին դէմ անէճք ու նըղք կը թափէին: Իսկզբան
ամէն մարդ կարծեց թէ ոստայնանկը մեռած է, բայց

փութով կանչուած բժշկին դարմանները զանիկայ նո-
րէն արթնցուցին: Գիմն վեց ամիս ծանր հիւանդու-
թիւն կրեէն ետքն հազիւ կարող եղաւ իր առող-
ջութիւնը գտնել:

Նրբ որ Արիտիւմ այսպիսի նոր եղեռնագոր-
ծութիւններով իր վախճանին հասնելու եւ իր համ-
բաւոյն ու կենաց այնչափ վտանգաւոր նամակները
ձեռք ձգելու կ'աշխատէր, միւս կողմանէ իր աս անի-
րաւութիւններն ու ոճիրներն երեւան ելելու սկը-
սած էին: Արիտիւմ որ դեռ յիմարանոցին մէջ անօգ-
նական մնացած էր, անակնկալ դէպքով մը կարող
եղաւ իր վեճակն իր բարեկամներէն մէկուն ծանու-
ցանել: Իր տանտիրոջը առանձնէկ տարուան աղջիկն
որ շատ անգամ իրմէ զանազան պարգեւներ ընդու-
նած եւ այնպէս իրեն մեծ սէր կապած էր, ման-
կական հետաքրքրութենէ մղուած, ուղեց անոր այցե-
լութիւն մ'ընել, եւ իրիկուան դէմ գպրոցէն դու-
նալու ժամանակ, խենթանոց մտաւ, պահապաններէն
մէկէն ծերոյն ուր ըլլալն իմացաւ եւ անոր դրան առ-
ջեն երթալով՝ ցած ձայնով, կանչեց. Արիտիւմ, սիրե-
լի Արիտիւմ, ինչպէս ես: Արտաքոյ կարգի էր ծերունի
հաշուէկալին աս ծանօթ ձայնէն զգացած ուրախու-
թիւնն. անմիջապէս իր աթոռէն ցատքեց դրան ետեւի
կողմն եկաւ եւ շարժած ձայնով մը մատաղ աղջկան
պատասխանեց: — Աստուած զքեզ օրհնէ Լիցցի.
ուրեմն զիս դեռ չես մոռցած:

— Ի՞նչպէս կրնամ զքեզ մոռնալ որ քու այն-
չափ պարգեւներդ վայելած եւ քու պատմութիւննե-
րովդ զուարճացած եմ: Ո՛հ, ան անպիտան օղին զիս
ան զուարճութիւններէ զըկեց: Բժիշկը քու խեն-
թութեանդ մի միայն պատճառ զանիկայ կը համարի:

— Ի՞նչ ես խենթեցած չեմ, ըսաւ ծերը:

— Ի՞նչու համար ուրեմն զքեզ աս մութ եւ
տխուր տեղը դրած են:

— Արովհետեւ անգութ ոճրագործի մ'իմ հոս
փակուած մնալս իր չարիքը գլուխ հանելու շատ
նպաստաւոր է: Սիրելի աղջիկս, միայն դուն կրնաս
զիս աս տառապանաց տեղէն ազատել:

— Ա՛յ. ի՞նչպէս:

— Ա՛յո՛ դուն, սիրելիս. եթէ ինձի կտոր մը
թուղթ եւ կապարագրիչ մը հոգաս, անմիջապէս աս
տեղէն կ'ելլեմ եւ նորէն իրիկուներն իմ պատմու-
թիւններովս զքեզ կը զուարճացընեմ:

Մատաղ օրիորդը քիչ մը յապաղելէն ետքն
իր տետրակէն թուղթ մը պատուեց, կապարագրիչը
մէջը դրաւ եւ դրան վրայի պղտիկ պատուհանին եր-
կաթէ վանդակներուն ծակէն ներս նետեց: Ծերը
թղթին վրայ քանի մը տող բան գրեց եւ նորէն
նոյն կերպով դուրս նետելով՝ աղջկան ըսաւ. Աս
թուղթը մնոր տար եւ իմ կողմանէս ըսէ թէ զա-
սիկայ անյապաղ Տէր Մորտաւնդին տանի: Լիցցի
թուղթն առնելուն պէս փութով նոյն տեղէն հե-
ռացաւ: Նոյն օրը Արիտիւմն նամակը, Մորտաւնդին
ձեռքն հասաւ:

Պէտքը շարունակուի:

ԲՆԱԳԱՏՄԱԳԱՆ

ՄԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԱՅԻՆ ԿԱՉՄԱՌԻՒՆԸ

(Շարունակութիւն տես թիւ 17)

Ընդերաց (փորոտեաց) ջղերուն մեծ մասն, ինչպէս ըսինք, ողնաշարի ծուծէն կ'ելլէ, որոնց հետ միա՝ նալով նաեւ ըզեղէն բուսած շատ ջղերու ճիւղեր՝ երկու երկայն ջղի բներ կը կազմուին որոնք գլխէն մինչեւ ողնաշարին վարի կողմը կ'երկըննան, քանի մը տեղեր Հանգոյցներ (տրոյիստ) կը շինեն, եւ նոյն հանգոյցները փորոտեաց ամէն կողմը ճիւղեր կ'արձակեն: Աս հանգոյցներուն գլխաւորներն են վերին եւ ներքին ժողի (վիլի) հանգոյցները, կրծոց հանգոյցներն, ու փորոտեաց մեծ եւ պղտիկ ջղերն Արեգակն եւ Երիկամն անկուածներով: Ընդերացի ջղերուն գլխաւոր յատկութիւնն աս է որ իրենց շարժումները մեր կամքէն բոլորովին անկախ կը կատարեն: Շնչառութիւնը, Մարտողութիւնն եւ Արեան շրջանն առանց մեր կամքէն կախում ունենալու եւ առանց մեր իմանալուն նաեւ քնոյ ժամանակ ալ կը կատարուին: Նոյնպէս աս ջղերն արտաքին ազդեցութիւն մը զգալու չին ծառայեր: Թէպէտ եւ ստամոքսն, աղիքն եւ երակներն անհամար ջղերով պատած են, ի վերայ այսր ամենայնի, ոչ կերակրոյն անոնց մէջ գալն եւ աղեաց մէջ շարժիլն, եւ ոչ արեան երակաց մէջ ըրած շրջանը կը զգանք: Ասոր բոլորովին հակառակ են Զգայութեան եւ Շարժման երակաց գործողութիւններն որոնք ոչ միայն իրենց պաշտօնը սաստիկ արագութեամբ մեր կամքին համեմատ կը կատարեն, այլ նաեւ ամենափոքր արտաքին ազդեցութիւնը մեր զգայութեան կը հաղորդեն:

Ըզեղը ջղաց գլխաւոր զանգուածն եւ ամենայն զգայութեան միջավայրը կամ կենդրոնն է, եւ իրաւամբ ամենայն ոգեւոր կարողութեան նիստը կը համարուի: Իրեն հասած նաեւ թեթեւ վնասը մեր ոգեւոր գործունէութեան մէկ մասին դադարման կամ աւրուելուն պատճառ կ'ըլլայ: Մարդու մ'ըզեղին վրայ պարզ ճնշում մ'ընելով՝ անոր բոլոր շարժման երեւոյթները կը դադրին, եւ եթէ ճնշումն երկայն ժամանակ շարունակուի, անոր մահն յառաջ կը բերէ: Եթէ ըզեղին միայն մէկ կողմը ճնշուի, մարմնոյն մէկ մասին անդամալուծութիւն կը պատճառէ: Աս պատճառաւ ըզեղին վնասուիլը կենաց շատ վտանգաւոր է, մանաւանդ երկայնեալ ծուծին վնասուիլն որմէ գրեթէ գլխոյն ամէն ջղերը կը բուսնին եւ շնչառութեան շարժումներն յառաջ կու գան, անմիջական մահուան պատճառ կ'ըլլան: Եթէ աս ծուծն իր գանգէն դուրս ելած տեղէն՝ այսինքն ծոծրակին վերի կողմէն կտրուի, մարդն (ինչպէս նաեւ անասունն) անմիջապէս մեռած գետին կ'իյնայ: Հին ժամանակներն երբ որ փիղը պատերազմներու մէջ կը գործածուէր,

եթէ աս անասուններէն մէկը կատղէր եւ իր կողման զինուորաց վնասելու սկսէր, փղապանն անոր ծոծրակին միջի հարուած մը տալով՝ ան յաղթամարմին կենդանին բոլորովին կ'ընդարմացընէր, եւ անվնաս կ'ընէր: Նոյնպէս կենաց շատ վտանգաւոր է ողնաշարի ծուծին վնասուիլը:

Սակայն ոչ միայն արտաբուստ այլ նաեւ մարմնոյն ներսէն պատճառած վնասները կենեքը վտանգի մէջ կը դնեն: Արեան՝ սաստիկութեամբ դէպ ի գլուխ դիմելը, շատ անգամ ջղաց գործունէութիւնը կ'արգելու. աս երեւոյթն է որ կաթուած կ'անուանուի: Շատ տեսակ ուտելիք եւ ըմպելիք ըզեղին կամ արտաքոյ կարգի յուզում ու գրգռութիւն կը պատճառեն եւ կամ զանիկայ կ'ընդարմացընեն. առաջին կերպով կ'ազդեն Գինեղ ոգին, Արիսն եւ ուրիշ ամէն թմբեցուցիչ թունաւոր նիւթերն. իսկ երկրորդ կերպով Բուսական թթուն (acide prussique): Աս նիւթերը զերեք ճաշակող անձանց գլխի պտոյտ, կատաղութիւն, անզգայութիւն, քնածութիւն եւ նաեւ միեւեւ մահ կը պատճառեն: Նաեւ պարզապէս մտաւոր աղբումներն, ինչպէս, սաստիկ ճգամբ մտածելն, արտաքոյ կարգի երկիւղը կամ ուրախութիւնը մեր ըզեղին վրայ կ'ազդեն եւ անոր կրնան մեծապէս վնասել:

Այլ երջին տարիներս, մանաւանդ Անգղիայի մէջ ըզեղի վրայ մեծ մաադրութիւն մը սկսան ընել, եւ մարդկանց գանգերը քննելով՝ անոնց ունեցած ձեւէն ու դիրքէն, ամէն մէկ մարդուն ունեցած մտաւոր կարողութիւնն որոշել:

Ոսկրներու, Մասններու եւ Ջղաց միաբան գործակցութիւնը մարմնոյն զանազան շարժումներն յառաջ կը բերեն. սակայն ասոնց մէջ գլխաւոր գործողը ջղերն են. ոսկրները՝ միայն իբրեւ մարմնոյն եւ անոր անդամներուն հիմունքը, շարման գործակից կ'ըլլան, իսկ մասններն իրենց ամփոփուելովը կամ կարճա՝ նալովը շարժումն յառաջ կը բերեն. բայց աս ամփոփուելու յատկութիւնն իրենք իրենցմէ չունին, այլ ջղերուն ազդեցութիւնը նոյնն իրենց կու տայ. այնպէս որ եթէ զօրաւոր մասնի մը վրայ աղբող ջիղը կտրուի, նոյն մասնը բոլորովին կ'ընդարմանայ եւ անշարժ կ'ըլլայ:

Գեւ ճշգիւ իմացուած չէ թէ ինչպէս ջղերը մասններուն երկըննալուն ու կարճանալուն պատճառ կ'ըլլան. կալվանի 1789ին գտաւ որ եղեքտրական հոսով մասններուն ձգուելուն ու ամփոփուելուն պատճառ կ'ըլլայ, ըստ ամենայնի այնպէս ինչպէս որ ջղերը նոյն գործքն յառաջ կը բերեն. ասկէ շատ բնագէտք երկայն ժամանակ կը համարէին թէ կենդանեաց մարմնոյն շարժմանց ամէն երեւոյթները եղեքտրական հոսմանէ յառաջ կու գան: Սակայն հաստատուն պատճառներ աս կածեաց անստոյգ ըլլալը ցուցուցած են:

Մասններու ամփոփուիլը (կարճանալը) սահմանաւոր ժամանակ մը կը տեւէ. նաեւ ամենազօրաւոր մասնը՝ շուտ կամ ուշ դարձեալ իր ամփոփուած վիճակն ազամայ կը փոխէ եւ թոյլ վիճակի մը մէջ կը

¹ Ինչ որ Մարդուն վրայ ջղաց նկատմամբ կ'ըսենք, նաեւ անասնոց եւ մանաւանդ մեծ անասնոց վրայ ալ իմանալու է:

մտնէ: Աս վիճակը Յոգնութիւն կ'անուանենք: Քիչ մը ժամանակ աս թոյլ վիճակի մէջ մնալէն ետքն՝ նոր Հանգիստ կը կոչենք, դարձեալ ամփոփուելու կարողութիւնը կը ստանայ: Շարժման զօրութիւնն՝ անոր ծառայող մասնին մեծութենէն եւ կամաց զօրութեան աստիճանէն կախում ունի: Թէ կամքն ինչ աստիճանի մասնին զօրութեան աւելնալուն պատճառ կ'ըլլայ, յայտնի կ'երեւայ բարկութեան, վտանգի եւ յիմարութեան մէջ մարդուն ունեցած արտաքոյ կարգի զօրութենէն:

Յ. ԿԵՆՈՅ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Կենաց գործարաններուն կը վերաբերին Մարսողութեան, Արեան շրջանին եւ Հնչառութեան գործարաններն, որոնք ստորին անասնոց մարմնոյն մէջ մէյմէկ առանձին գործարաններ են իսկ կատարեալ կազմութիւն ունեցող անասնոց եւ մանաւանդ մարդկային մարմնոյն մէջ զանազան գործարաններու միաբան գործակցութեամբն աս երեք գործողութիւնները կը կատարուին:

Մարսողութեան գործարանը:


Մարսողութիւն ըսելով կ'իմանանք ան գործողութիւնն՝ որով մարմնոյն իբրեւ սնունդ տրուած նիւթերը (կերակուրներն եւ ըմպելիներն) այնպիսի վիճակի մը մէջ կը մտնեն որ կարող կ'ըլլան մարմնոյն զանազան մասերը կազմելու ծառայել: Աս գործքը կատարելու ծառայող ամէն գործարանները Մարսողութեան գործարաններն են: Ասոնց գործքն է նախ սննդեան նիւթերը կատարեալ լուծել եւ երկրորդ անոնց մեր մարմնոյն անօգուտ մասերը նորէն դուրս հանել:

Մարսողութեան բուն գործարանը գլանաձեւ խողովակի ձեւ ունին որ Աղիք կը կոչուի. իր վերին ծայրը գտնուած ծակն որ Բէքլան կ'ըսուի, կերակրեղէնն ու ըմպելին ներս ընդունելու կը ծառայէ, իսկ ստորին ծայրն անօգուտ նիւթերը դուրս կը հանէ: Աղեաց աս երկու ծայրերուն մէջ գտնուած ընդարձակ մասը Մասմիքս կ'անուանուի: Մարդն, ինչպէս նաեւ ամէն կատարեալ կազմութիւն ունեցող անասունք աս աղիքէն զատ շատ ուրիշ մարսողութեան գործարաններ ալ ունին որոնք Յ. Պատկերին մէջ յայտնի կ'երեւան: — Աս պատկերին մէջ գործարաններն իրենց բուն դիրքէն քիչ մը տարբեր նկարուած են, այսինքն լեարդին առջեւի կողմը վեր վերցուած է որպէս զի անոր ետեւը գտնուող գործարաններն ալ յայտնի երեւան: —

Կերակուրներուն մանրիլն եւ լուծուիլը բերնին մէջ կը սկսի, ուր աղանները զանոնք ծամելով պղտիկ կտորներ կը դարձնեն եւ կը ճմլեն: Լեզուն կերակուր բերնին մէջ կը դարձնէ եւ աղաններուն տակը կը բերէ: Միանգամայն ծամուած կերակուրը լորձուքով կը խառնուի՝ որ Լորձաւիտ ըսուած ունեցնէրէ դուրս կ'ելլէ: Աս լորձակալներն երեք զոյգ

են եւ ներքին ծամեաց երկու կողմը, լեզուին տակը կը գտնուին: Լորձաւիտ անգոյն եւ ջրի նման հեղուկ մըն է որուն հարկը մասին մէջ մէկ մասէն քիչ մ'աւելի հալած հաստատուն նիւթ մը կայ եւ գլխաւորաբար չոր կերակուրներն աղէկ թրջելու եւ զանոնք դիւրասաց ընելու կը ծառայէ, որով կրնայ դիւրութեամբ կլլուիլ: Թէպէտ եւ Լորձուքը հաղիւ հասարակ ջրէն քիչ մ'աւելի լուծելու (հալեցնելու) զօրութիւն ունի, ի վերայ այսր ամենայնի փորձերը ցուցուցած են թէ ծամուած եւ լորձուքով խառնուած կերակուրները շատ աւելի դիւրաւ կը մարսուին, քան թէ առանց ծամելու կլլուածները:

Պատ. 3.



Ծամուած կերակուրը կոկորդին անցնելով շուտ մը Մասմիքսին մէջ կ'երթայ. ասիկայ մաշկեղէն պարկ մըն է գրեթէ ծռած որսի պարկի նման, որ փորին մէջ Առագաստին անմիջապէս տակը կը գտնուի եւ առջեւի կողմանէ լեարդով գոցուած է: Իր ձախ կողմն՝ ուր կոկորդին հետ կը միանայ, եւ Մասմիքսուքներուն կը կազմէ, լայն է. բայց դէպ ի աջակողման ծայրը կամաց կամաց կը նեղնայ: Մարսողութեան ժամանակ թէ աս աջ կողմի ծակը եւ թէ Ստամոքսաբերանն օղակաձեւ ջղերով կ'ամփոփուին ու բոլորովին կը գոցուին: Ստամոքսին ձախակողման մասին ետեւը Փայծուղը կայ, որ երակի մը զանազան ճիւղերէն կազմուած գործարան մըն է: Ասոր՝ մարմնոյն մէջ ինչ բանի ծառայելը գեռ իմացուած չէ:

Ստամոքսին ներսի կողմը կարգ մը մասնի թելեր կը պատեն, որոնց ձեռքովը կրնայ անիկայ (ստամոքսը) ճնշուիլ: Ստամոքսն իր պարապ եղած ժամանակը թոյլ է, եւ ներսի կողմանէ ծալք ծալք կ'ըլլայ. բայց աս ծալքերն իր լեցուելէն ետքը կը քիչնան: Իր ներսի կողման երեսը Մասմիքսին մաշկով մը

պատած է: Ասիկայ թիթու հեղուկ մը դուրս կուտայ, որ Մտամնքսի հիւթ կ'անուանուի:

Ստամբուի հիւթը հարիւրին 98 հասարակ ջուր է որուն մէջ քիչ մը հասարակ աղ եւ աղածթու կը գտնուի: Իսկզբան կը կարծուէր որ կերակուրներն ստամբուին ներքին երեսը քսուելով կը մանրուին, բայց հաստատուն փորձեր յայտնի ցուցուցին թէ աս կարծիքն ստույգ չէ, այլ կերակուրները ստամբուի հիւթով կը լուծուին: Նաեւ եթէ մեռած անասնէ մ'աս ստամբուի հիւթն առնուի եւ հարկաւոր եղածին չափ տաքցնելէն ետքն անոր մէջ մանր կտրտած կերակուրներ դուրսն, զանոնք կը լուծէ: Նոյն իսկ արուեստով կաղմուած ստամբուի հիւթով կերակուրները լուծելու փորձ եղած եւ կատարեալ յաջողած է: Սակայն ստամբուէն առնուած հիւթն աս գործողութիւնը շատ աւելի շուտ կը կատարէ: Ասոր համար կը կարծուի թէ ստամբուի հիւթին մէջ ուրիշ մարտողական հիւթ մ'ալ կայ:

Ստամբուի հիւթին ազդեցութեամբը կերակուրն ստամբուին մէջ լուծուելով Մտամնքսի ըսուած խիւսանման զանգուածը կը դառնայ. անկէ ետքը բուն Աղեաց մէջը կ'երթայ: Ասիկայ 30 ոտնաչափի մօտ երկայնութիւն ունի, ասոր համար շատ գալարներով փորին վարի կողմը տեղաւորուած է: Աղեաց կաղմութիւնն իր զանազան կողմերն իրարու բոլորովին անհաւասար է, եւ աս պատճառաւ ամէն մէկ մասը զատ անուն ունի: Ան մասն որուն մէջ մամացն ամենէն յառաջ կ'երթայ, Երկարատանձանեան աղիք կը կոչուի, որովհետեւ իր երկայնութիւնը 12 մատի լայնութեան հաւասար է: Երկրորդական մասն աղեաց մէջ մարսողութեան գործողութիւնը կը շարունակուի. հոս նախ մամացն Որոտիկի յորձանքով կը խառնուի որ Որոտիկի յորձանքով կ'ելլէ, (Պատ. 3.) եւ բերնի լորձոնքին հետ շատ նմանութիւն ունի: Միանգամայն հոս Լեղին Լեղատաշիկն դուրս կը թափուի եւ մամացին մէջ կը խառնուի: Լեղին վճիտ եւ կանաչագոյն հեղուկ մըն է, ու սաստիկ դառն համ ունի: զինքը կաղմող նիւթերն են իւղային թիթու մ'եւ հայբորակ, ուստի եւ բնութենէ կաղմուած աճառ մըն է, եւ իրօք ալ իբրեւ աճառ շատ ազնիւ կտաւելէններ լուալու կը գործածուի:

Լեւորդին պաշտօնն է լեղին զատել եւ Լեղատարին մէջ ժողվել: Իր զանգուածը պղտիկ եւ հաստատուն հատիկներու կոյտ մըն է, որոնց մէջ շատ արեան անոթներ կան: Աս անոթներէն բաղմանիւ բարակ խողովակներ դուրս կ'ելլեն՝ որոնք զԼեղին կը զատեն:

Լեղոյն Մամացին հետ խառնուելէն ետքը մարսողութիւնը կատարուած լմնցած է. նոյն ժամանակը կերակուրներն երկու մասերէ կը բաղկանան, որոնց մէկը հեղուկ եւ միւսը թանձր է. աս վերջինը մարմնոյն սնունդ տալու չիճառայեր, ասոր համար դարձեալ անկէ դուրս կ'ելլէ: Իսկ հեղուկ մասը կերակրոց մէջ գանուած ան ամէն նիւթերը կը բովանդա-

կէ, որոնք մարմնոյն սննդեան համար կարեւոր են, եւ աս պատճառաւ Մեղրեան միւթ կամ խոխոց կ'անուանուի: Ասիկայ անդոյն է եւ արեան հետ մեծ նմանութիւն ունի, ինչպէս ետքը պիտ'որ տեսնենք:

Մամացն Երկրորդական մասնեան աղիքէն Նրքաղիքին մէջ կ'անցնի՝ որ նեղ, երկայն եւ գալարեալ է, այնպէս որ իր (մամացին) ասոր մէջ ըրած շրջանը կամ ճամբան երկայն ժամանակ կը տեւէ: Աղիքն անդադար գալարածեւ (որդի մ'ըրած շարժման պէս) շարժելով՝ մամացն ալ կը շարժէ եւ յառաջ կը տանի: Նրքաղիքին բոլոր երկայնութեամբը շատ սպինգանման անոթներ կան որոնք Սննդեան հիւթը կը ծծեն եւ ծծիչ երակ ըսուած բարակ խողովակներու մէջէն մինչեւ կուրծք կը տանին, ուր աս ամէն ծծիչ երակներն իրարու հետ կը միանան եւ մէկ հաստ խողովակ մը կը ձևանան: Ասիկայ արեան երակներուն հետ կը հաղորդուի եւ այնպէս խախտացն արեան հետ կը խառնէ: Որչափ որ Մամացն աղեաց մէջ դէպ ի վար յառաջ կ'երթայ, նոյնչափ իր մէջի սննդեան հիւթը կը նուազի, եւ երբ որ վերջապէս աղեաց Հաստաղիք ըսուած լայն տեղը կը հասնի՝ (Պատ. 3.) իր մէջէն ամէն գործածական հիւթերն ելած են: Հոս մամացին մնացորդն աւելի թանձր է եւ կը սկսի փտտիլ, եւ անկէ ետքը մարմնէն դուրս կ'ելլէ:

Մարսողութեան գործարաններն ամէն տեսակ կերակուրները մի եւ նոյն կերպով չեն կրնար փոփոխել կամ մարսել. ընդհանրապէս խիտ եւ կարծր նիւթերն աւելի դժուարաւ կը մարսուին քան թէ կալուղ ու փափուկ նիւթերն: Եթէ կերակրոյն մէկ մասն որոշեալ ժամանակի մը մէջ չիմարսիր, միւս մարսուած մասին հետ աղեաց մէջ յառաջ կ'երթայ եւ առանց փոփոխութիւն կրելու մարմնէն դուրս կ'ելլէ: Յայտնի է որ այսպիսի անմարս նիւթերը սննդեան օգուտ չեն ընեն, եւ նաեւ մարմնոյն անհանգրձութիւն մ'ալ կը պատճառեն:


Թէ ուսումնական եւ թէ անձնական փորձերն իբրեւ դիւրամարս եւ 1—1½ ժամու մէջ մարսելի ցուցուցած են հետեւեալ կերակրեղէնները. Ծնեբերկը (գոռչգոնմաղ), Ծմելը (սպանաղ), Լախուրը (քիթիկի), զանազան պտղոց Բանդակները (միտրիպլա), Յորեանը, Գարին, Որիզը, Սիմիտը (Մըսըր պոռոտայը) Ոլոը (պիզիկը), Բակլան, Լուբիան, Շագանակն, օր մը կեցած հացը, Գառնուկի եւ Հաւեղինաց միսը, կակուղ խաշած հաւկիթը, կաթն եւ ջրով խաշած ձուկը:

Լեղի ուշ մարսող կերակուրներն են, Հաղալը (մարոն), Զեղերգը (բաւիթը), Կաղամբն, եփուած ու չեփուած Սիսը, Բողկը, Զակնդեղը (բանջար), Ստեպղինը (նախնա) չոր պտուղները, թարմ Հացը, Թուզը, Խողենին, Պանիրը, կարծր խաշած հաւկիթն եւ այլն: Իսկ բուն դժուարամարս կերակրեղէններն՝ որոնք սովորական ժամանակուան մէջ չեն կրնար մարսուիլ են Սունկը (մանթար), ամէն պտղոց կուտերն, Ընկոյզը, Կաղինը, Նուշը, Ծառոց եւ անասնոց իւ-

ղերը, Չամիչը, Պաղոց կեղեւները, մեղեւներուն մաշկային մասերն ու կռճիկները:

Տաք կերակուրներն աւելի դիւրաւ կը մարսուին քան թէ պղերն, որովհետեւ աս վերջիններն ստամոքսին տաքութիւնը կը նուազցնեն, որ կերակրոց դիւրաւ լուծուելուն մեծապէս կ'օգնէ:

Պիտիւնը շարունակուի:



ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՄՈՆՏՆԵՐՆ ԵՒ ԱՐՋԵՐՆ

Ամերիկայի հիստորիային անտառներուն մէջ տեսակ մը կատաղի դաղան կը գտնուի, որ իր վայրենութեան համար Հնդկական գետ, տեղացեաց լեզուաւ Լա-ճէ Սա-ս կ'անուանուի: Նոր Անգլիայի եւ անոր մօտաւոր տեղերուն բնակիչքն որոնք արջերու եւ դայլերու դէմ մեծ յօժարութեամբ կ'երթան եւ անոնց հետ աներկիւղ կը կռուին, աս դաղանին միայն անուանէն կը դարհուրին: Սմբթ անուամբ Անգլիայի մը հետեւեալ պատահարը կը պատմէ, որ Արտուզգոյի մէջ իրեն պատահեր է:

Իմ բնկերներէս ամենք անտառի մը մէջ փայտ կտրելու զբաղած էին. ես ալ առանձին ծամբայ ելայ անոնց քովն երթալու. արդէն իրենց դառնաւ տեղը մօտեցած էի երբ որ յանկարծ աս դիւանման դաղաններէն մէկն առջեւս ելաւ. ժամանակ չկար խորհելու թէ ինչ կերպով կարելի է իր ձեռքէն ազատիլ, կամ ինքզինքս պաշտպանել, որովհետեւ քովս ամենեւին զենք չունէի: Ահապա վերջին ստիպանքի վտանգաւոր էր. դիտէի որ ան ահագին անասունը միայն իմ մահաւամբս դո՛հ կ'ընայ բլաւ. յուսահատութենէ առաջնորդեալ, ինձի մօտ գտնուած պզտիկ ծառի մը վրայ ելայ. բայց հաղիւ թէ անոր կէսն հասած էի, դաղանը սաստիկ կատաղութեամբ, եւ դուցէ նաեւ քաղցէն ստիպեալ իմ ետեւէս ծառին վրայ ելաւ եւ իր սուր ախտանքովն ոտքիս մէջը բռնեց: Քարեբախտութեամբ կարող եղայ հողաթափս շուտով հանել՝ որ անանոյն ահաւաններուն մէջ մնաց, եւ մեծ արագութեամբ ծառին առեւել սպառնով կողմն ելայ: Սակայն մի եւ նոյն ժամանակ դաղանը 10 ոտք հեռու հաստ ծառի մը վրայ ելաւ մինչեւ որ իմ գտնուած տեղեղս բարձրութեան հասաւ եւ անկէ սաստիկ զօրութեամբ իմ վրաս ցատքելով՝ տկուաներն իմ բարձիս (պոսթ) մէկուն անցուցու հոն կախուած մնաց, մինչեւ որ միտն ալ անոր ծանրութիւնը չկրնար լիւր վերցնել, տեղէն փրթաւ եւ այնպէս անասունը գետին ինկաւ: Իր ախտանքուն մէջ մնացած մնի կտորը մեծ ախորժակով կըլէին ետքը, կատաղի դաղանը դարձեալ վեր եկաւ, եւ նորէն բարձէս ուրիշ կտոր մը փրցուց. աս կերպով իր յարձակումը շարունակեց եւ ոտքիս մեկը կտոր կտոր փրցնելով կը կըլէր: Իմ զգայած ցաւիս սաստիկութիւնը չեմ կրնար խօսքով յայտնել:

Սակայն աս մարտիրոսական տանջանաց ժամանակ կենաց վտանգն ինձի նոր զօրութիւն մը տուաւ վերջին ճիգ մ'ընելու. ծառին մէկ ճիւղը կտրելով՝ քովս գտնուած պզտիկ դանակը մեծ գփուարութեամբ անոր ծայրը կտակցի, եւ երբ որ դաղանը դարձեալ իմ վրաս յարձակելու սկսաւ, աս յանկարծագիւտ զենքով սկսայ անոր գլուխը վերաւորել: Աս կերպով վերջապէս յաջողեցաւ իմ կատաղի թշնամիս այնպէս մը վերաւորել որ ալ իր յարձակումը

ները դադարեցուց եւ անտառին մէջ աներեւոյթ եղաւ: Կռուոյն ժամանակ խնդադար բոլոր զօրութեամբս բնկերներս օգնութեան կը կանչէի. կը յուսայի որ անոնք ձայնս շուտով կը լսեն, բայց իրենց հասած ժամանակն արդէն ամէն բան լմնցած էր: Սաստիկ ճիգ ընելով հաղիւ կըցայ ծառէն վար իջնալ եւ հոն մարած գետին ինկայ: Ընկերներս անմիջապէս գլխուս եւ երեսիս վրայ ձիւն դնելով՝ զիս արթնցուցին, ծառերու ճիւղերէն պատգարակ մը շինեցին, զիս անոր վրայ դրին եւ իրենց վշտանքը տարին. հոն վերքերս կարելի եղածին չափ լուացին ու կտակցին, եւ փութով մօտաւոր քաղաք մը տանելով՝ բժշկական դարմաններու յանձնեցին: Գրեթէ տարի մը հիւանդ պառկեցայ, եւ հաղիւ անկէ ետքը կարող եղայ անկողնէն ելլել. սակայն մեծամեծ սպիներ եւ քանի մ'անբժշկելի վերքեր միշտ մնացին:

Ուրիշ անգամ մը մեր բնակարանին մօտէն աս անասուններէն մէկը տեսնեմք՝ որուն մէկ ոտքն երկաթէ թաւարդէ մը բռնուած էր. սակայն ինքը նոյն թաւարդով մէկտեղ անարգել կը քայլէր: Մեր բնկերներէն երկու հոգի հրացանով իր ետեւէն դացին եւ երկայն ժամանակ զենքն հալածելէն ետքն հաղիւ կըցան իրեն համիւ: Գազանը փախչելու ժամանակ, մէկ ցատքելով՝ իրմէ 15 ոտնաչափ հեռու գտնուող ծաղարի մը հասաւ եւ զանիկայ բռնեց: Երբ որ բնկերներս իրեն շատ մօտեցան, յանկարծ ետ դարձաւ եւ անոնց վրայ եկաւ: Թեպէտ եւ հրացանի գնդակը զենքը չարաչար վերաւորեց, բայց կատաղի անասունն առանց իր ցաւին միտ դնելու սկսաւ մեծ զօրութեամբ իր վրայ յարձակողներուն հետ կռուիլ, մինչեւ որ հրացանին կոթովը գլխոյն քանի մը հարուած ընդունելով՝ վերջապէս անկենդան գետին ինկաւ:

Հասարակ սեւ արջն ալ Ամերիկայի հիստորիային կողմանց վնասակար դաղաններէն մէկն է, որուն հետ նոյն կողմերուն բնակիչքն անդադար կռիւ ընելու ստիպուած են: Չկայ գաղան մը կ'ըսէր ան կողմերուն վրայ գրող գաղթական մը, որուն հետ այնչափ յաճախ պատերազմ ընելու ստիպուած բլանք, ինչպէս հասարակ սեւ արջուն հետ: Իր սաստիկ զօրութիւնն, իր մեծ ճարտարութիւնն որով հարուածներէն կը զգուշանայ եւ իր թշնամոյն ձեռքէն զենքերը կամ ուրիշ գործիքները կը յափշտակէ, զենքը շատ վտանգաւոր հակառակորդ մը կ'ընեն: Շատ անգամ իր ճարտար գաղութիւնները մեզի մեծ վտարձութիւն պատճառած են. բայց երբեմն նաեւ զմեզ մեծ վնասագոյց մէջ ձգած են:

Մնացած մ'այսպիսի արջ մը քանի մ'օր անդադար մեր կարաւանին ետեւէն եկաւ եւ յայտնի կը ցուցնէր թէ կ'ուզէ մեզի վնաս մը հասցնել: Իրեն հետ առաջին ծանօթութիւնը պզտիկ գետակի մը բերանն ըրինք, ուր ջրին մէջ գտնուած ժայռ մը կ'ուղեկնք կտրել, եւ այնպէս գետակը նաւագնալի ընէ: Որովհետեւ մեր գործքը քիչ ժամանակի մէջ կրնար լմննալ, մեզի վեր ի վերայ կայան մը պատրաստեցինք եւ մեր կարասիքն անպատուար մեր բոլորաբեր գրինք: Մեր անկոչ ուղեկիցը գիշերը կարասիներուն այցելութեան եկաւ, եւ անոնց մէջէն կապոց մ'ուռաւ որ մեր բնկերներէն մէկուն ձմերուան զգեստները, հողաթափներն եւ անկողնէն հարկաւոր բաները կը բովանդակէր: Իր սաստիկ հետաքրքրութիւնը թող չտուաւ որ կապոցը շատ հեռու տանի, այլ մեր բնակած տեղեղն անմիջապէս քովն սկսաւ անոր մէջի բովանդակածը քննել:

երբեք խիտ մաքրաւոր մ'ան առաջնոր ճիշդ քննութիւն մ'ըրած չէ: Չորրորտանի մաքրաւորը կապոյն իբրեւ մաքրե փախած վաճառք ամբողջ գրաւեց, զգեստեղէնները բուրովին բղիկ բղիկ ըրաւ. երկու զոյգ ամուր հողաթափները ծամելով՝ անպիտանացուց: Նաեւ ածելին իր քննութեանն ազատ չմնաց. թէպէտ եւ չկրցանք դիտել թէ արդեօք փորձ ըրած ինքզինքն ածելելու, սակայն յայտնի տեսանք թէ ածելելոյն համը նայեցաւ, որովհետեւ անոր կոթը բերանն առաւ եւ երկայն ժամանակ ծամեց:

Դրկու օր ետքը նոյն տեղէն քանի մը մլնն հեռու տեղ մը գացինք, ուր թումբ մը պիտ'որ շինէինք. եւ որովհետեւ աս գործքն երկայն ժամանակի կարօտ էր, մեր բնակարանն հաստատուն կերպով շինեցինք եւ անոր շրջանակին հողակուտով ամրացուցինք: Երբ հոս հաստատուեւին քանի մ'օր ետքը՝ գիշերն երբ որ ամենքնիս ալ քնոյ մէջ էինք, յանկարծ տանիքին վրայ անսովոր ձայն մը լսեցինք: Անմիջապէս դուշակեցինք թէ մեր շորքոտանի բարեկամը դարձեալ մեզի այցելութեան եկած է, եւ մէյմէկ վառած փայտ առած՝ դացինք զինքը դիմաւորելու: Տանիքին վրայ պզտիկ կարասով մը շաքար կար, արջն աս կարասը հետն առած բնակարանին քովի թփերուն մէջ տարած էր, եւ արդէն կարասին մէկ կողմի տախտակները քակած՝ կը պատրաստուէր աղէկ ընթրիք մ'ընելու. բայց վառած փայտերը զինքը խրտուցին եւ ստիպեցին իր պատրաստած կերակուրը թող տալ: Երկրորդ գիշերը գազանը դարձեալ զմեզ մեր քնոյն մէջ անհամբեր ըրաւ. սակայն մենք ալ մեր կողմանէ զինքն արժանաւոր կերպով ընդունելու պատրաստուած էինք. մեր ընկերներէն մէկը բնակարանին դուռը կէս բանալով՝ տեսաւ թէ գիշերական հիւրը դարձեալ մեր պաշարներուն մէջ իրեն ճաշակին համաձայն կերակուր մը կը փնտռէ. անմիջապէս ձեռքի հրացանն անոր ճակատն ուղղեց ու գնդակն արձակեց: Գաղանք թէպէտ եւ ծանր վերաւորեցաւ, սակայն իր աւարին մէկ մասով ծանրաբայլ ետ քաշուեցաւ ու մօտաւոր թփերուն մէջ անհերքելի թէ զաւ: Իր ձեռքէն միանգամ ընդ միշտ ազատելու համար, ստիպուեցանք դարձեալ վառած փայտերով զինքը փրկուեալ. իր թափած առատ արիւնն եւ թփերուն շարժումն իր գոնուած տեղը մեզի ծանուցին, հոն մեր ջահերով չոր ու դիւրալիս թփոյ կրակ առինք. վերաւոր գազանն որ հազիւ կրնար յառաջ երթալ, ամէն կողմանէ բոցերէ պաշարուելով՝ անոնց մէջ միտի դարձաւ եւ իր յանդուգն գողութեան պատիժն առաւ:

Ասոր նման դէպքեր հիւսիսային Ամերիկայ շատ յաճախ կը պատահին:

ՍԱՆՐԱՍԻՐԻՔ ԵՎ ԶՈՒՍՐԺԱԼԻՔ

Աղէկ ջատագովութիւն մը:

Աւստրալիական ընկերութեան մը մէջ օրէնք մը կար որ ընկերութեան անդամներէն ով որ առանց պատճառի ժողովքին ներկայ չէր գտնուէր կամ ուշ կու գար, ստակի տոյժ մը կը վճարէր: Ընկերներէն մէկն օր մ'որոշեալ ժամանակէն քանի մը ժամ ետքը ժողովքն տեղն եկաւ: Գահերէցն իրեն աս յապաղման պատճառն հարցուց. «Տէր, ըսաւ հարցեալը, ստուգիւ առ անգամ կարող չէի աւելի յառաջ գալ, տան հոգերն, բնտանեկան վշտեր... ձեզի չեմ կրնար ըսել թէ արդեօք կինս յառաջ պիտ'որ մեռնի թէ աղջիկս: «Ատիկայ բաւական

պատճառ է զքեզ ջատագովելու», ըսաւ գահերէցը, կարծելով թէ իր կինն եւ դուստրը ծանր հիւանդ են, ուստի ուշացող անդամն առանց տոյժ վճարելու իր տեղը նստաւ ու ժողովն յառաջ գնաց: Երկրորդ առտուն իրեն բարեկամ ժողովականներէն մէկը զինքը տեսնելով՝ կարեկցութեամբ հարցուց. «Ինչպէս են կինդ ու դուստրդ: «Շատ արեւի եւ առողջ են պատասխանեց անիկայ: — Ինչպէս. երեկ իրկուէն չըսիր թէ չեմ գիտեր թէ անոնցմէ որն յառաջ պիտ'որ մեռնի: «Անիկայ հիմայ ալ չեմ գիտեր. բայց ժամանակը պիտ'որ յայտնէ պատասխանեց խաբեբայ ընկերը:

Կորնկի մը նախանձախնդրութիւնը:

Բրուսիայի Սամբանտ ըսուած շրջանակին մէջ զոյգ մը կուռնիկ (Բուռնիկ) տան մը տանիքին վրայ բոյն դրած էին եւ եգն երկու ձու ածած էր: Տանտէրն աս բուռնիկ մէջ հետեւեալ փորձն ըրաւ. կուռնիկն ձուերէն մէկը բուռնէն դուրս հանելով՝ անոր տեղ նոր ածուած բադի հաւկիթ մը դրաւ: Կուռնիկն աս երկու ձուերը թփեց եւ ձագերն հանեց. սակայն հազիւ թէ արու կուռնիկն իր բուռնիկ մէջ օտար բադի ձագը տեսաւ, իր ընկերին դիմացը գնաց կեցաւ եւ սկսան երկուքն իրարու դէմ խառնաձայն աղաղակ արձակել: Անբարբառ խօսակցութիւնը բաւական երկայն ժամանակ շարունակուեցին ետեւ, արու կուռնիկը թուաւ գնաց եւ քիչ մ'ետքը 8-10 կուռնիկ ընկերութեամբ նորէն իր բոյնը դարձաւ: Կուռնիկներն անմիջապէս յանցաւոր էգին վրայ յարձակեցան եւ նոյն խառնաձայն աղաղակաւ զանիկայ իրենց կտուցներուն այնչափ անխնայ ծեծեցին մինչեւ որ խեղճը մեռած՝ տանիքէն վար գլորեցաւ: Ասկէ ետքն օտար կուռնիկներն իրենց տեղերը դարձան. միայն բուռնիկ տէրն հոն մնաց եւ հաւասար խնամքով թէ իր ձագն եւ թէ բադը դարմանեց:

Լոնտոնի մէջ շինուած թռչնոյ վոնդակները:

Լոնտոնի մէջ 3-400ի մօտ Գերմանացիք եւ Իտալացիք, քանի մը Գաղղիացիք եւ հարիւրի չափ Անգղիացիք թռչնոյ վոնդակ (ֆաֆե) շինելու կը ջրաղին: Ամէն մէկ գործաւոր օրը 12 վանդակ կը շինէ որով տարուէ տարի 210,000 վանդակ կը շինուի:

Գալիֆոռնիայի հսկայական ծառերը:

Երկու տարի յառաջ Գալիֆոռնիայի հսկայ ծառերէն մէկն Անգղիա բերուեցաւ հոն մշակուելու համար: Աս ծառն որ կոնաբերներու (ֆլեմիշ արհմէ) տեսակէն է, Գալիֆոռնիայի Սեկերա Նեվադա ըսուած անբեր լեռանց վրայ՝ ծովուն երեսէն 5000 ոտք բարձր կը գտնուի: Հոն մէկ մղոնի չափ գետնի վրայ 80-90 հատ այսպիսի ահագին ծառեր կը գտնուին, որոնց բարձրութիւնը 250 մինչեւ 320 ոտքի կը հասնի: Իրենց տարիքն ինչպէս իրենց կեղեւները կը ցուցնեն, 3000ի մօտ է: Աս ծառերէն մէկուն կեղեւը հասնուած, Ս. Ֆրանչիսկոյի (Գալիֆոռնիայի մայրաքաղաքին) մէջ իր բնական դիրքով քովէ քով դրուած է եւ իբրեւ զարմանալի բան մը կը ցուցուի: Ասոր մէջ կողմը դարգերով եւ ուրիշ կարասիքով զարդարած եւ կարաւի սրահ մը շինած են, ուր դաշնամուր (Բեյսոֆոն) եւ քառասուն հոգւոյ բաւական տեղ կայ:

Համարձակ պատասխան մը:

Փրեգերիկոս Բ. Բրուսիայի թագաւորը շատ անգամ իր օգնական զօրապետներէն մէկուն հետ քուէով (շաք) խաղ մը կը խաղար: Օր մը դարձեալ նոյն զօրապետին հետ խաղի նըստելու ժամանակ, դարձաւ ըսաւ իրեն. «Աս առանց ստակի խաղէն այնչափ համ չեմ առնուր, առկէ ետքը մէկ խաղն երեք դարանդանի խաղանք: Չօրապետն համարձակութեամբ պատասխանեց. «Տէր արքայ, եթէ ստակով խաղալ կուզէք, հարկ է որ ես առկէ ետքը ձեզի հետ խաղալէն դադրեմ. արդէն առանց ստակի խաղացած ժամանակնիս դուք շատ անգամ քուէները գլուխս դարներու կը սպառնաք. ինչ կ'ըլլայ իմ վնասկս եթէ ստակի համար խաղալու ըլլանք: